*յանիծից դատապարտութեանց։ Եւ Քրիստոս Աստուած ըղձեզ արձակէ յամենայն հոգեկան և մարմնական մեղաց ամէն։*

*Վասն զի ս՟ք (ձեռ. ոք) հանդուցանեն զմեզ ի վշտաց անօրինաց և ի դառնաբարոյից անհնազանդ և անսէր հոգևոր կրօնաւորական եղբարց։*

*Գրեցաւ աստուածային կտակս ի սուրբ ուխտս Աստուածածնի, որ այժմ Մեծոփայ վանք անուանի, ի գաւառս Քաջբերունեաց։ Եւ օրինակն առաջին գրեալ էր ի սուրբ ուխտն Եղէվարդու, ի ձեռն սրբոյ եկեղեցւոյն Թէոդորոսի, որ էր գրեալ յառաջին օրինակէն ձեռամբ աշակերտաց սուրբ վարդապետին Սարգսի, Դաւթի և Ներսեսի, յոյժ սխալ։ Քրիստոս աստուած ողորմի հոգոց նոցին. ամէն։*

---

## Ե.

## № 1403/1380

23ա *Կարմրագեղով.*

*Գիրքս այս Մեծոփայ ս՟բ ուխտին է եւ Թումա բաբունապետին է յիշատակ. յիշեցէք ի բարին ք՟ս. ամէն։*

23ա *Սև թանաքով. «Երկնաւոր և հրաշաւոր ա՟ծապարգև իշխանութ՟բ ի գահոյս պետութ՟ե բազմեալ և հոգիաներկ պայծառութ՟բ հովուական հնչմամբ հանդուցիչ բանաւոր հաւտի մեծ հովուապետին ք՟ի, շնորհընգալ և անուանակիր մեծին Բարսղի և Յոհաննու Ոսկիբերանին, մեծ րաբունապետ մեր Թումայ։ Ի բազմավրդով ծովասարաս կոհակաց մեղսապատում ալեաց աշխարհիս ղեկավար («ղեկավարեայ» գրուած, բայց ընդգծուածի վերայ հետևեալ բառը) նաւաստի հաւատացելոց ի ք՟ս. գլուխ արհիական և պետ պանծալի, կրկնակի և եռակի փարթամու՟թբ ուռճալրացեալ ա՟ծային գան.... (կիսատ մնացած)։*

68ա *Արդ՝ յերեսս անկեալ պաղատիմ ք՟ի մանկանցդ և գրոց աշկ՟տեալ անձանցդ՝ զոգեղու՟թբ ախտիւ պարուրեալս ի կերպարանէ վեհին՝ զպի՟տկ անուն վդ՟պս Թ՟վմա, յ՟ածարնակ ուխտէ Ա՟ծածնէ, որ այժմ Մեծոփայ վանք վերաձայնի. մաղթեմ պատահողացդ ամէն յիշել բարեմիտ կամաւք ի մեղաց թողութ՟ն խնդրել ի տ՟է։ Եւ տարագիծ գըրչիս հ՟ր որդւոյ իմոյ Մ՟փախ, եւ ՟ա եղբար՟րցն մերոց։ Եւ դուք ի վերջին եկելոցն զնոյն ընկալջիք զթող՟ի մ՟ղց. ամէն*։*